ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

10.11.2014 06:20

Հարգելի՛ փաստաբաններ,
ՀՀ փաստաբանների պալատի կողմից հավատարմագրված Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) հայաստանյան ներկայացուցչությունը փաստաբանների համար կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ:
Դասընթացները տեղի կունենան 2014թ. նոյեմբերի 22-ին և 29-ին ժամը 11:00-ից մինչև 15:00-ը Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) հայաստանյան ներկայացուցչության գրասենյակում (ք. Երևան, Ալեք Մանուկյան, 9 շենք, 4-րդ հարկ, 406 սենյակ),:
1. Նոյեմբերի 22-ին՝ «Սահմանադրական դատարան դիմելու չափորոշիչները».
2. Նոյեմբերի 29-ին՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու չափորոշիչները»:
Դասընթացները կվարեն Արայիկ Ղազարյանը և Արտակ Ջեյնալյանը:
Տեղերը սահմանափակ են՝ 25 մասնակից յուրաքանչյուր դասընթացի համար: Մասնակցելով դասընթացին՝ յուրաքանչյուր փաստաբան կլրացնի պարտադիր վերապատրաստման 6 ժամ:
Խնդրում ենք գրանցվել միայն այն փաստաբաններին, ովքեր վստահ են, որ կմասնակցեն վերապատրաստմանը:
Լրացուցիչ տեղեկությունների և դասընթացներին գրանցվելու համար խնդրում ենք մինչև 2014թ. նոյեմբերի 19-ը զանգահարել ABA/ROLI հայաստանյան ներկայացուցչության գրասենյակ 010 55 49 91 և 010 55 64 49 հեռախոսահամարներով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })